ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

# ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

# Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «1» դեկտեմբերի 2016թ.

## Հ Ր Ա Մ Ա Ն N 68-Ա

**ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՄԲ ՀԱՏՈՒԿ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2001թ. նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 1122 որոշմամբ, հիմք ընդունելով 2016թ. հոկտեմբերի 3-ի ՀՀ կրթության և գիտության նախարարի N 966-Ա/2 հրամանը և 2016թ. նոյեմբերի 30-ի ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահի N67-Ա հրամանը՝

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Հաստատել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում բարձր արդյունավետությամբ հատուկ գիտահետազոտական աշխատանքներ իրականացնող լաբորատորիաների աջակցության մրցույթի շահառուներին պետության կողմից ֆինանսական աջակցության տրամադրման պայմանագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Լևոն Մարդոյանին:

**ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*Հավելված*
*ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահի*
*2016 թ. դեկտեմբերի 1-ի N 68-Ա հրամանի*

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N
# ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՄԲ ՀԱՏՈՒԿ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

ք. Երևան _____ 2016 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն, ի դեմս աշխատակազմի ղեկավար Լևոն Մարդոյանի (այսուհետ՝ **Կոմիտե**), որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և

_____

_____ -ը,

(թեմայի ղեկավարի անունը, ազգանունը, պաշտոնը, կազմակերպությունը, որտեղ այն իրականացվելու է )

(այսուհետ՝ **Կատարող**), մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ **Կողմեր**), ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 450-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 1122 որոշմամբ, ինչպես նաև հիմք ընդունելով Կոմիտեի նախագահի 2016 թվականի նոյեմբերի 30 -ի N 67-Ա հրամանը՝ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով Կոմիտեն պարտավորվում է Կատարողին հատկացնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում անցկացված բարձր արդյունավետությամբ հատուկ գիտահետազոտական աշխատանքներ իրականացնող լաբորատորիաների աջակցության տրամադրման մրցույթի շահառուներին (այսուհետ՝ Թեմա) տրամադրվող ֆինանսավորման ծավալը:

## 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1. Սույն պայմանագրի գինն է՝ (տրամադրվող դրամական միջոցների չափը)

_____ ( _____ )

(թվերով և բառերով)

ՀՀ դրամ՝ _____ -ին

(լաբորատորիայի անվանումը)

վճարելու նպատակով:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

3.1. Կոմիտեն սույն պայմանագրի 2.1 ենթակետում նշված ֆինանսական միջոցները Կազմակերպությանն է տրամադրում 2016 թվականի դեկտեմբերի 1-ից 2017 թվականի նոյեմբերի 30-ը (2018 թվականի նոյեմբերի 30-ը) ընկած ժամանակահատվածի համար, ամսական կտրվածքով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Կոմիտեն իրավունք ունի.

4.1.1. Կատարողից պահանջել կատարելու սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները.

4.1.2. Կատարողից պահանջել աշխատանքը կատարել սույն պայմանագրով նախատեսված ժամկետում.

4.1.3. կատարել Թեմայի ղեկավարի փոփոխություն՝ Թեմայի ղեկավարի կողմից իր պարտականությունների կատարման անհնարինության դեպքում՝ կազմակերպության, որտեղ կատարվում է Թեման, գիտական (գիտատեխնիկական) խորհրդի միջնորդությամբ և Թեմայում ընդգրկված կատարողների համաձայնությամբ.

4.1.4. կատարել Թեմայի ֆինանսական նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով հատկացված գումարի վերաբաշխում, տարեկան մեկ անգամ՝ դրա 20 տոկոսի չափով.

4.1.5. կատարել Թեմայի կատարողների կազմում փոփոխություն՝ Թեմայի ղեկավարի միջնորդությամբ՝ համարժեք թեկնածության դեպքում,

4.2. Կատարողն իրավունք ունի՝

4.2.1. Կոմիտեի կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծելու պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները.

4.2.2. Թեմայի կատարման համար, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավել երրորդ անձանց.

4.2.3. Կոմիտեի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

4.3. Կոմիտեն պարտավոր է՝

4.3.1. սույն պայմանագրի 3.1 ենթակետով սահմանված ժամկետներում Կազմակերպությանը տրամադրել նախատեսված ֆինանսական միջոցները:

4.4. Կատարողը պարտավոր է՝

4.4.1. Թեման կատարել անձամբ.

4.4.2. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Թեմայով և պայմանագրով սահմանված նպատակներով և չափաքանակներով.

4.4.3. աշխատանքի սպասվելիք արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին անհապաղ տեղեկացնել Կոմիտե.

4.4.4. ժամանակին Կոմիտե տեղեկացնել տարեկան 2 ամսից ավելի ժամկետով Հայաստանի Հանրապետությունից Թեմայի ղեկավարի կամ կատարողի անընդհատ բացակայության, միջոցների ոչ նպատակային իրացման և այլ հանգամանքների մասին.

4.4.5. Թեմայի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան.

4.4.6. Թեմայի շրջանակներում իրականացված ցանկացած գիտական հրապարակման մեջ՝ ներառյալ զեկույցների թեզիսները, հեղինակները պարտավոր են հղում կատարել Թեմայի վրա, նշելով նրա ծածկագիրը:

## 5.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կողմերը սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կրում են պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան:

## 6.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

## 8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Սույն պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.2. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումները իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Կատարող՝**

_____

(անուն, ազգանուն)

_____

(կազմակերպության անվանումը)

_____

(կազմակերպության հասցեն)

_____

(կազմակերպության բանկային վավերապայմանը)

_____

(ստորագրություն)

Ստորագրությունը հաստատում եմ

(կազմակերպության ղեկավար կամ գիտական քարտուղար)՝

_____

(անուն, ազգանուն)

_____

(ստորագրություն)

**Կ. Տ.**

**Կոմիտե՝**

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտե

ք. Երևան, Օրբելի եղբայրների 22

Հ/հ 900011033066

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Լ. Մարդոյան

_____

(ստորագրություն)

**Կ. Տ.**